**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | թիվ 50 |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Incorporation (13.05.2006-till now) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | ՀՀԵՌՀՏ 2006.05.03/5(24) Հոդ.21 |
| Ընդունող մարմին | Արաբկիր թաղային համայնքի ավագանի |
| Ընդունման ամսաթիվ | 14.04.2006 |
| Ստորագրող մարմին | Արաբկիր համայնքի թաղապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 14.04.2006 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 13.05.2006 |


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ**

**ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2006 թվականի թիվ 50
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2006 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ կետերով՝ համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հաստատել Արաբկիրի համայնքի 2006 թվականի՝
1.1 տեղական տուրքերի դրույքաչափերը (հավելված 1),
1.2 տեղական վճարների դրույքաչափերը (հավելված 2):

**Համայնքի ղեկավար՝** **Հ. Շահինյան**

**Հավելված 1**

*Հաստատված է*
*Արաբկիր համայնքի ավագանու*
*14.04.2006 թ. թիվ 50 որոշմամբ*

**ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

| Հ/հ | Տեղական տուրքի անվանումը | Ժամանակահատված | Դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Ոգելից խմիչքի և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն | | |
| 1.1 | հիմնական շինությունների ներսում՝ յուրաքանչյուր | եռամսյակ | 20,000.0 |
| 1.2 | ոչ հիմնական շինությունների ներսում՝ յուրաքանչյուր | եռամսյակ | 10,000.0 |
| 2 | Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն | | |
| 2.1 | գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար | տարեկան | 700,000.0 |
| 2.2 | գյուղատնտեսական մթերքների համար | օրական | 500.0 |
| 2.3 | այլ ապրանքների (այդ թվում ոգելից խմիչք և (կամ) ծխախոտի արտադրանքի) վաճառքի համար՝ յուրաքանչյուր | եռամսյակ | 25,000.0 |
| 3 | Հանրային սննդի օբյեկտներում, բաղնիքներում (սաունաներում), զվարճանքի օբյեկտներում ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն | | |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3.1 | բաղնիքների (սաունաների) համար | տարեկան | 200,000.0 |
| 3.2 | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | տարեկան | 200,000.0 |
| 3.3 | շահումով խաղերի կազմակերպման համար | տարեկան | 500,000.0 |
| 4 | Ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար | տարեկան | 0.0 |
| 5 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու ընթացիկ տարվա համար | | 1,000.0 |
| 6 | Համայնքի վարչական տարածքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ` ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվություն | | |
| 6.1 | հիմնական օբյեկտների համար | | |
| 6.1.1 | մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | | 75,000.0 |
| 6.1.2 | 6.1.1 ենթակետով չնախատեսված օբյեկտների համար | | |
| 6.1.2.1 | 201 քմ-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 150,000.0 |
| 6.1.2.2 | 501 քմ-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 250,000.0 |
| 6.1.2.3 | 1001 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 350,000.0 |
| 6.2 | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | | |
| 6.2.1 | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 15,000.0 |
| 6.2.2 | 20 քմ ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | | 25,000.0 |
| 7 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինության այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| 7.1 | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | | 15,000.0 |
| 7.2 | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի «7.1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի «6» կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | | |
| 7.3 | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի «6» կետով սահմանված նորմերը: | | |
| 8 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինության այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | | 15,000.0 |
| 9 | Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն | | |
| 9.1 | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի յուրաքանչյուր 1 քմ համար | ամսական | 3,000.0 |
| 9.2 | թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի յուրաքանչյուր 1 քմ համար | ամսական | 5,250.0 |
| 9.3 | այլ արտաքին գովազդի յուրաքանչյուր քմ-ի համար | ամսական | 2,400.0 |
| 9.4 | մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը` ծխախոտի արտաքին գովազդի յուրաքանչյուր քմ-ի համար | ամսական | 8,000.0 |
| 9.5 | համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակի համար | ամսական | 700.0 |

**Հավելված 2**

*Հաստատված է*
*Արաբկիր համայնքի ավագանու*
*14.04.2006 թ. թիվ 50 որոշմամբ*

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| հ/հ | Տեղական վճարների անվանումը | չափման միավորը | վարձավճար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Շինարարության կամ շինարարական տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար, | | |
| 1.1 | մինչև 20 քմ շինության համար | - | 15,000.0 |
| 1.2 | 20 քմ-ից մինչև 50 քմ շինության համար | - | 50,000.0 |
| 1.3 | 50 քմ և ավելի շինության համար | - | 150,000.0 |
| 2 | շինության ավարտը փաստագրելու | | |
| 2.1 | մինչև 20 քմ շինության համար | | 20,000.0 |
| 2.2 | 20 քմ-ից մինչև 50 քմ շինության համար | | 50,000.0 |
| 2.3 | 50 քմ և ավելի շինության համար | | 75,000.0 |
| 2.4 | բազմաբնակարան բնակելի շենքերի համար | | 500,000.0 |
| 3 | համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար | 1 քմ | 2,000.0 |
| 4 | համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակեպման համար | յուրաքանչյուր մասնակից | 5,000.0 |